ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ք.Եղեգնաձոր 14 դեկտեմբերի 2015թ.

ՀՀ Վայոց ձորի <<Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի>> ընդլայնված նիստ

Նիստի աշխատանքներին մասնակցում են՝ փոխմարզպետ , հանձնաժողովի նախագահ Մ.Հարությունյանը

հանձնաժողովի անդամներ՝

Մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Ա.Գրիգորյանը, քարտուղարության պետ Հայկ Կարապետյանը, ներքին աուդիտի բաժնի պետ Վասակ Կարապետյանը, տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Նորայր Սիմոնյանը,'Հույս 89' ՀԿ-ի նախագահ Ալմաստ Սաֆարյանը, 'Շուշան ' ՀԿ-ի նախագահ Նարինե Հախվերդյանը,մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առաջատար մասնագետ Ց. Բաբայանը /քարտուղար/ , ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի սոցիալական ապահովության պետական ծառայության Եղեգնաձորի սոցիալական ապահովության տարածքային բաժնի պետ Ա.Սահակյանը, <<Սոցիալ-հոգեբանական և վիճակագրական հետազոտման կենտրոն>> ՀԿ -ի փոխնախագահ Խնկանուշ Մարկոսյանը,<< Խելացի մանուկ >> մանկական զարգացման կենտրոնի դաստիարակ Նարինե Դավթյանը:

Նիստին հրավիրված են մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Խ. Գևորգյանը, Եղեգնաձորի զբաղվածության ծառայության կենտրոնի տնօրենի տեղակալ Սամվել Ավետիսյանը :

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության 2015թ. տարեկան ծրագրի ամփոփում, 2015 թվականի հաշվետվությունը:
2. ՀՀ Վայոց ձորի Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության 2016թ. տարեկան ծրագիրը
3. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության ոլորտում Վայոց ձորի մարզի ՀԿ ների կատարած աշխատանքները 2015թվականին
4. Հաշմանդամություն ունեցող անձանց ընդգրկվածությունը զբաղվածության պետական ծրագրերում:
5. Կազմակերպչական այլ հարցեր

ՕՐ Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց 2015թվականի կատարած աշխատանքների հաշվետվությունը:

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց ՀՀ Վայոց ձորի Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության 2016թ. տարեկան ծրագիրը:Նշեց որ 2016 թվականը հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների տարի է հռչակվել և նարկայացրեց նաև ՀՀ Վայոց ձորի մարզում արդեն հանձնաժողովի կողմից հաստատված միջոցառումների ծրագիրը :
<<Սոցիալ-հոգեբանական և վիճակագրական հետազոտման կենտրոն>> ՀԿ –ի փոխնախագահ Խննկանուշ Մարկոսյանը ներկայացրեց դեկտեմբերի 3-ին հաշմանդամության միջազգային օրվան նվիրված միջոցառումների մասին տեղեկետվություն: Միջոցառումը ինտեգրման ցերեկույթ էր, որին մասնակցել են Եղեգնաձորի տարածաշրջանի հաշմանդամություն ունեցող 30 երեխաներ, որոնց գեղարվեստական կատարումներով ողջունելու էին եկել իրենց հասակակից 10 շնորհալի աշակերտներ:

Եղեգնաձորի զբաղվածության ծառայության կենտրոնի տնօրենի տեղակալ Սամվել Ավետիսյանը ներկայացրեց զբաղվածության պետական ծրագրերում հաշմանդամություն ունեցող անձանց ընդգրկվածության մասին հաշվետվություն: Մարզի զբաղվածության 3 կենտրոններում՝ <<Աշխատաշուկայում անմրցունակ անձանց ինքնազբաղվածության խթանման նպատակով փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում ծրագրում>> ընդգրկվել է 2 հաշմանդամություն ունեցող անձ, <<Աշխատաշուկայում անմրցունակ անձանց համար աշխատանքի տեղավորման նպատակով գործատուներին այցելության ծախսերի փոխհատուցում>> ծրագրում 2 հաշմանդամություն ունեցող անձ, <<Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքային ունակությունների և կարողությունների ձեռքբերման համար միանվագ փոխհատուցում գործատուին՝ 1, <<Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար աշխատավարձի փոխհատուցման տրամադրում ծրագրում>> 3 հաշմանդամություն ունեցող անձ,<< Գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում՝ 1 հաշմանդամություն ունեցող անձ, <<Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գ/տ աջակցության տրամադրում>> ծրագրում ընդգրկվել է 45 հաշմանդամություն ունեցող անձ:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Հաստատել ՀՀ Վայոց ձորի Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության 2016թ. տարեկան ծրագիրը
2. 2015թվականին կատարած աշխատանքների մասին հաշվետվությունը և <<Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության 2016թ. տարեկան ծրագիրը>> ներկայացնել ՀՀ ԱՍՀՆ և տեղադրել մարզպետարանի կայքում:

Հանձնաժողովի նախագահ՝ Մ.Հարությունյան
Քարտուղար Ց.Բաբայան

14.12.2015թ.